

ՏԻՐԱՊԵՏԵՆՔ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ

## ԱՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

ԹԵՏԶՐԱԾԻ ՏՊԱՐԱՆԻ ՏԵԽՆԻԿԱՅԻ  
ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՐ

ԿԱԶՄԵՑ Ա. ԵՓՐԻԿ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԹԵՏԶՐԱԾԻ ՏՊԱՐԱՆԻ

ՅԵՐԵՎԱՆ - 1934

122 NOV 2011

## ՏՐՄ ՄՈՍԿՎԱՅԻ ՄԱՐԶՐԱԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՄԱՆԸ

«Մեմ իշխանություն ձեռք բերինք մի յերկրում, վարի տեխնիկան ուստափելի յետամեաց ե: Ցեղ ահա բանից գուրս և զայս, վոր մի կողմից մեմ մեր յերկրում ունենք ամենահառաջադիմ իշխանությունն ամբողջ աշխարհում, մյուս կողմից մենք ունենք չափազանց յետամեաց տեխնիկա» (ԱՏԱԼԻՆ):

Հնկ. Սուալինի այդ խոսքերն իր ժամանակին հնչեցին վորպես տեխնիկային տիրապետելու մի մարտակոչ, և առաջին հնդամյակի ավարտման պատցեառը և յերկրորդ հնդամյակի առաջըն տարում մեր յերկրի բանվոր դասակարգը ցույց տվեց, թե վորքան մեծ ե իր ստեղծագործական նախաձեռնությունը, վորքան մեծ ե իր սկիրզածությունը սոցիալիզմի դորժին: «Բալշվիլիները պետք ե տիրապետեն տեխնիկային» լոգունզը դարձավ առաջին հերթին կոմմունիստների ու կոմյերիտականների արտօդրուկան-տեխնիկական աշխատանքի հիմնական բաղւնու այդ լոգունզը վորոշեց սոցիալիստական մայրական ուժը արվածայնության բընութը, հարվածայնությունը մորը հետզհետ բարձրանալով ու համալույս բարձրառույն առաջինանի:



Գլուխ № 31  
Պատվութ № 57  
Տիրաք 1000  
Դեմքատի Տպաբան



1-31/279/2

կետք և զարգանա այն պահանջների վորով, վոր առաջ  
ջացրել են Մոսկվայի դորժարանների առաջադեմ  
բանվորները, այն եւ ճշգրած այլին և միացն նա, ով  
ակտիվորեն յուրացնում է նոր տեխնիկան: Դա ամ-  
բողջովին բախում եւ լիկ: Սատլէնի ցուցումներից և  
կնուտկոմքու կու կազի ի հունվարյան պլենումի վորո-  
ջումներից՝ այն մասին, վոր շյեթի յերկրորդ հնա-  
մյակն ուղարկ է յուրջ հաջողություն ուսենալ, ապա  
պետք ե նոր ջրնարարության այժմյան լոգունգը  
լրացնը նոր ձեռնարկությունները և նոր տեխնիկան  
յուրացնելու լոգունկով: Առաջնորդի հենց այդ դի-  
րեկտուր կատարման նշանաբանով պետք ե աճի այժմ  
սոցիալիստական մրցութեան ու հարցած այնությունը:

Տեխնիկալին, տիրապետելու համար մղվող մաս-  
սայական պայքարի ձևերը չափազանց բազմազան են  
այսուղղ մենք տեսնում ենք և զանազան արտադրա-  
կան արշավեր տեխնիկայի այլ բազմեալու համար,  
և մասսայական-արտադրական աշխատանք ցիսերում  
և ագրոգատաներում, և արտադր սկան խորհրդակցու-  
թյուններ, և հերթափոխային-հանդիպական պլանա-  
վորում և շատ ուղի բան: Տեխնիկանդի և տիխ-  
ուուցման ամենահետաքրքրական և հիմնավոր ձե-  
վերից մեկը պետք է համարել առաջին հերթին այն  
հասարակական-տեխնիկական քննությունը, առաջա-  
վոր տեխնիկային տիրապետելու սոցիալիստական  
քննությունը, վոր առաջարկելու և լենինյան կոմյերիտ-  
մրությունն իր տառականական որը:

( 4 )

«Նպատակ ունենալով տեխնիկմումի վերաբեր-  
յալ գիտելիքների նախնական ստուգում կատարել —  
կարգում ենք մենք Համելի Յեմ-ի կենտրոնի 1933 թ.  
հոկտեմբերի 12-ի վորոշման մեջ, — , նպատակ ունե-  
նալով ինայոդության և մեխանիզմները հարգելու ու  
սիրելու ուժքը ստեղծել՝ մշնչել 1934 թ. հունվարի  
1-ը բոլոր դորժարաններում ու ֆարբիկաներում կի-  
րառել համարութենական կոմյերիտական հասարա-  
կական քննությունն ակիմներկային տիրապետելու վե-  
րաբերյալ»:

Համելի Յեմ-ի կենտրոնի նույն վորոշման մեջ  
նշված ե թիւ անհրաժեշտ ե, վոր յուրաքանչյուր յերի-  
տասարդ բանվոր տիխմարդնմումը քննություն տա կոչ  
ուշ 1934 թ. մարտի 1-ից, — իսկ սոցիալիստական  
քննությունը պետք ե փաստորեն դառնա այդ նպա-  
տակն իրագործելու դիմավոր նախապատրարաւում:

Լենինյան կոմյերիտմիությունը՝ կուսակցության  
ղեկավարությամբ՝ հերոսական աշխատանքի բազմա-  
թիվ որինակներ և ցույց տվել մեր սոցիալիստական  
շինարարության բոլոր փրոնաներում, նա մրաժամա-  
նակ՝ սոցմրցում ու հարցածայնություն կազմակեր-  
պելու փայլուն սրբնակներ և ցույց տվել կոմյերիտ-  
մության այդ նոր, զարմանալի նախաձեռնությունը  
պետք ե ընդհանուր պրոլետարական գործ գառնա,  
տեխնիկական մինչմում տալու սոցիալիստական քնն-  
ությունը պետք ե ընդգրկի բանվորների լայն խա-  
վերին:

( 5 )

Հոկայտկան քաղաքական և արտադրակտն նշանակություն տալով հասարակական - տեխնիկական քննությունը տպագրական ձեռնարկություններում Տպագրական Արտադրության Բանվորների Մրության Մուկայի մարզքաղակումը լույս ե ընծայում այս դրսքույկը հատկապես այն նպատակով, վոր այդ կարելորադույն ձեռնարկումը վորքան կարելի յե հաջողությամբ կիրապիլ:

Քննությունների կիրառման հս մար անհրաժեշտ ե նկատի առնել այն, վոր ձեռնարկությունների ուղարկությանն առաջարկվող և դրույկին կցված հարցարանը (ՅՈՊՐԾՈՒՅՈՒՆ) պետք ե ծառայի միայն փորպես որինակ: Հարցարանը կազմված ե մեր միության ՃՏՄ-ի մարզքուրոյց բրիգադի կողմէց՝ ԽՍՀՄ-ի Ազնությունատի հաստատած նորմաների համաձան Այդ ի հարկե չի նշանակում, վոր տեղական պայմանների համամատ՝ հարցերը չեն կարող ճշտվել ու լրացվել: Ընդհակառակը, հարցերն ամրողջովին պետք ե բղիսեն տվյալ ձեռնարկության բնություց: Գետք ե ձգտել, վոր քննությունների ժամանակ ընկերական մթնոլորա ստեղծվի, պետք ե բացատրել ու պարզաբանել այն ամենը, ինչ անհասկանալի յի: Քննությունից առաջ պետք ե իմքակային (ԿՐՈՋԿՈՎԱՅ) լուրջ աշխատանք կատարվի՝ տեխմինի մումբն ալրապետելու ուղղությամբ, պետք ե կազմակերպել տեխնիկական կրօնութացիաներ, արտադրական եքսկուրսաներ, տեխնիկական մարտեր և այլն:

( 6 )

Այդ ամբողջ ալիքատանքը պետք ե տոգորված լինի մրցումով ու մասսայականությամբ: Համիկէ ՅԵՄ-ի բջիջների, ՃՏԴ-ի բյուրոյի, գործարկոմի, ԶՈՏ-ի և ձեռնարկությունների բոլոր հասարակական կաղմակերպությունների վրա մեծ պատասխանատվություն ե դրվում քննությունները հաջողությամբ կատարելու համար: Հարկադրը և ստեղծել փորակալ քննիչ հանձնաժողովներ, փորոնք կարողանային ճշգագահատել պատասխանները և մրածամանակ իրենք բացատրություններ տային տվյալ ձեռնարկության վերաբերյալ ինդիվիւններին (դրա համար ել մենք ստանդարտային պատասխաններ չենք առաջարկում):

Քննություն տված բանվորները պետք ե վկայականներ ստանան այն մասին, թե իրենց տեխնիկական գիտելիքների մակարդակն ինչ գնահատական ե դաել:

Այն բանվորները, վորոնք նորմաների քննություն ալիս՝ «գովելի» դնահատական են ստացել և դրանից հետո առնվազը մեկ ամիս կատարել են արտադրանքի նորմաները, ախտաելով առանց խոտանի ու պարապուրդի, ԶՈՏ-ի նշան են ստանում:

Այդ ամբողջ աշխատանքը բնավ չպետք ե կամպանիայի բնույթ կրի: Հասարակական տեխնիկական սոցիալիստական քննությունը պետք ե դառնա բանվորի տեխնիկական գիտելիքները սիստեմատիկաբար բարձրացնելու մի ձև, վորը կոդնի նըան ավելի ակ-

( 7 )

արգուեն մասնակցել յերկրորդ հնդամյակի պլանները  
գերակատարելու պայքարին:

Քննությունը կազմակերպելու և կատարելու ըն-  
թացքում կարելի յե ոդափել հատկյալ գրականու-  
թյունից.

1. ԿամկչենՄ-ի կենտրոնի վորոշումը («Կոմсо-  
մոլյակա Պարա», 1933 թ. հոկտեմբերի 14-ի հա-  
մարը):

2. Ա. Անդրեյեվի հոդվածը («Կոմսոմոլյա  
Պարա», 9 հոկտեմբերի 1933 թ.):

3. Ն. Բաժենովի հոդվածը («Լեցա Ինդուստրիա»,  
22 հոկտեմբերի 1933 թ.):

4. Ինչպես պետք է կազմակերպել սոսուզությ («Կոմսոմոլյակա Պարա», 23 հոկտեմբերի 1933  
թ.):

5. «Պահանջների նորմաներ՝ տպագրական ձեռ-  
նարկությունների համար» հաստ. ԱժԿ-ի կողմից,  
Մոսկվա, 1933 թ. 80 էջ:

6. «Պարտադիր տեխմինիմումի ծրագրեր տպա-  
գրական արդյունաբերության բանվորների համար»  
Մ. Գիզլեգպրոմ, 1933 թ. 72 էջ:

7. «Խմբնեմում մտցնելու գիրեկտիվ նյութեր»  
Մ. Գիզլեգպրոմ, 1933 թ.

8. Հարցեր ու պատասխաններ՝ ընդհանուր պոլի-  
տրաֆիայի դասնթացի գերաբերյալ. Մ. 1933 թ.:

## ԻՆՉՊԵԼ ՊԵՏՓ Ն ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՍՏՈՒԳՈՒՄԸ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ ԲՁԻՋՆԵՐԻՆ,  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻ ԿՈՄՅԵՐԻՏԱ-  
ԿԱՆՆԵՐԻ ՑԵՎ ԲԱՆՎՈՐ ՑԵՐԻԾԱ-  
ՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՀԱՍԱՐԾԱԿԱՆ-  
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԻ ԿԱԶՄԱ-  
ԿԵՐՊԵԼՈՒ ՑԵՎ ԿԻՐԱՍՈԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաստատված Համամիութեական  
ԼԿԳԵՄ-ի Կենտկոմի բյուրոյի Կող-  
մից 1933 թ. հոկտեմբերի 17-ին:  
Համաձայնցված ե ՀԱՍԿԵ-ի հետ

## ՁՆՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Արտադրության մեջ աշխատելու հա-  
մար անհրաժեշտ տեխնիկական գիտելիք-  
ներին տիրապետելու խնդրի հաջող լուծումը

պահանջում ե մասսայորեն զարգացնել սուցիալիստական մրցումն ու հարվածայնությունը՝ տեխնիկական ուսուցման և առաջին հերթին տեխնիկական մինիմումի ծավալման դործում։ Սոցիալիստական մրցման արդպիսի մասսայական ձեւ ե հանդիսանում հենց այն հասարակական-տեխնիկական քըննությունը, վորը ծնունդ ե առել շնորհիվ առաջավոր ձեռնարկությունների կոմյերի-տականների յեռանդի ու ստեղծագործության։

Հասարակական-տեխնիկական քննությունը, վորպես սոցիալիստական մրցման մասսայական մի ձեւ, վորպես արտադրական-տեխնիկական գիտելիքներին տիրապետելու և սարքավորումն ու տեխնոլոգիական պրոցեսները յուրացնելու ունակություններին տիրապետելու, ինչպես նաև գաղղթահների ու աղբեկանների վրա աշխատանքի իրավունք ձեռք բերելու մրցում՝ կիրառվում ե բոլոր արդյունաբերական, արանսալորտային և գյուղատնտեսական ձեռնարկություններում (խորհանտեսություններ, մեքենա-

տրակառություններ, կոլտնաեսություններ)։

2. Հասարակական-տեխնիկական քննությունն անցկացվում ե այն բոլոր կոմյերի տականների և անկուսակցական լերիտասարդության մեջ, վորոնք աշխատում են ագրեգատների, բարդ մեխանիզմների, դագգահների, առաջատար տեխնոլոգիական ոպերացիաների վրա, ինչպես նաև պատամիանատու ու վտանգավոր աշխատանք են կատարում։ Կոմյերիտական կազմակերպությունները պարտավոր են գործարանալին ամբողջ հաստրակայնության հետ միասին ակտիվ մասնակցություն ցուցաբերել ալդ գործում և աջակցել վոր հասարակական-տեխնիկական քննություննը դաւնա բանվորության ընդհանուր գործը։

3. Հասարակական-տեխնիկական քննությունն ընդգրկում ե առաջին հերթին այն բոլոր պրոֆեսիաները, վորոնց պատկանող բանվորները պարտավոր են տեխնիմումից քննությունն տալ այս տարի։ Նպատակ ունենալով նախապատրաստել

հասարակական - տեխնիկական քննության համար բանվորների այս կատեգորիաներին, վորոնք 1933 թ. չեն ընդգրկվել տեխմինիմումի ցանցի կողմից, կոմիերիտատական կազմակերպությունները հասարակական նախաձեռնության կարգով ԶՈՅ-ի բջիջների և պրոֆկազմակերպությունների հետ միասին կազմակերպում են տեխուսուցման լրացուցիչ ցանց, վորոն աշխատելու յե այն ընդհանուր հիմունքներով, վարոնք գոյություն ունեն տեխմինիմումի գասընթացների (խըմբակների) համար (պահանջների նորմաներ, ծրագրեր, դասընթացի ավարտումը պետական կըալիֆիկացիոն հանձնաժողովների միջոցով):

Հասարակական-տեխնիկական քննությանը նախապատրաստելու հիմնական ձևը՝ սիստեմատիկ ուսուցումն ե տեխմինիմումի խմբակներում:

## ՆԱԽԵՊԱՏՐԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Կոմիերիտատական կազմակերպությունները ընդլայնված պլենումներում քննարկում են հասարակական-տեխնիկական քըննության նպատակները և կիրառման կարգը, ձեռնարկության վարչության և տեխմինիմումի դասընթացների (խմբակների) դեկավարների հետ միասին քննություն տալու ժամկետներ են սահմանում կոմիերիտատականների և առանձին կվալիֆիկացիայի յերիտասարդների համար, քննությունն սկսելով առաջին հերթին առաջատար ցեխերում և պըռփեսիաներից:

Համկանչեմ. ի ցեխարին բջիջները քննարկում ու մշակում են քննության պայմաններն ու կատարման կարգը կոմիերիտատական ժողովներում և կոմիերիտատական խմբակներում, մասնակից դարձնելով այդ աշխատանքներին իրենց ցեխի անկուսակցական յերիտասարդությանը, հասակավոր բանվորներին և ինժեներատեխնիկական աշխատողներին: Համկանչեմ. ի բջիջները մըցում

Են կազմակերպում տեխմինիմումի գտնվածաթացների (խմբակների) և նրանց ունկընդիրների միջև՝ տեխմինիմումի վերաբերյալ ծրագրերը ամենաարագ և լավագույն կերպով մշակելու համար։

2. Կոմիերիտմիության կոմիտեները տեխմարոպների ու գործարանային վարչությունների հետ միասին վճռական միջոցներ են ձեռք առնում տեխնիկական մինիմումի խըմբակների աշխատանքը արմատապես բարելավելու համար։ Անհրաժեշտ ե միջոցներ ձեռք առնել, վորապեսզի հասրավոր լինի մինչև 1934 թվի մարտի 1 ը լիովին ընդողեկել սահմանված ժամկետներում բանվորների համապատասխան խմբերին (զրուպպա), ինչպես նաև բոլոր կոմիերիտականներին։ Միաժամանակ անհրաժեշտ ե ծրագրերը մոտեցնել առանձին մասնագիտությունների կոնկրետ խնդիրներին, ամրապնդել դաստիարակությունների կազմը լավագույն կաղըրերով, ապահովել խմբակների ունկընդիրներին ուսումնական ձեռնարկներով, բարելավել մեթոդական դեկավարությունը,

( 14 )

լայնորեն ներգրավելով այդ գործի միջ գործարանների ինժեներա տեխնիկական աշխատողներին և ԲՈՒՀերի ու Տեխնիկակերի դասատուներին։

Դրա հետ միասին կոմիտեներն ու բջիջները ՃՍ-ի բյուրոյի և ԶՈՏ-ի տեխպրոպագանդի գործը վարող աշխատակիցների հետ միասնաբար կազմակերպում են տեխնիկական կոնսուլտացիաներ, արտադրական-տեխնիկական եքսկուրսիաներ (դեպի թանգարանները, տեխնիկալի պալատներն ու իրենց գործարանում), տեխնիկիտորինաներ և տեխնիկական մարտեր հասարակական-աելինիկական քննությամբ ընդողեկվածների միջև։ Այդ նպատակով կոմիտեներն ու բջիջները կվալիֆիկացիոն հանձնաժողովների ղեկավարությամբ և տեխնիմումի վերաբերյալ պահանջների նորմաների հիման վրա ոժանդակ հարցարաններ են կազմում և բաժանում հասարակական-տեխնիկական քըննության համար պատրաստվող բոլոր անձանց։

3. Դրա հետ միաժամանակ գործարանա-

( 15 )

յին կոմիտեները և Համելի Յես-ի ցեխային  
բջիջները լայն պարքար են ծավալւամ վթա-  
ռանքների (ավարիա) և սարքավորման ջարդ-  
վածքների դեմ, արտադրական-տեխնիկա-  
կան դատեր են կազմակերպում դագգյահ-  
ները կոտրողների դեմ, մեքենաների ու  
դագգյահների վրա աշխատող բանվորների  
մրցականչ են կազմակերպում։ Նույն այդ  
կոմիտեներն ու բջիջները կազմակերպում  
են՝ բանվորներին արտադրական-տեխնի-  
կական հրահանգներ տալու գործը, ինչպես  
նաև սարքավորման վերաբերմամբ տարվաղ  
խնամքի ստուգումը, ներգրավիլով այդ աշշ-  
խատանքների մեջ վարպետներին, տեխնիկ-  
ներին, մեխանիկներին և ոգտագործելով  
գործարանային տեխնիկական լաբարատո-  
րիաների բովանդակ գործը։

4. Քննության ամբողջ նախազատրաստական աշխատանքին զուգընթաց պիտք ելայնորեն ծավալի սոցիալիստական մրցումը քիչ է առաջաների, գործարանների և քաղաքների միջև՝ տեխնիկական անհրաժեշտ գիտելիք-

Ները և առաջին հերթին տեխնիկական մի-  
նիմույնը լավագույն կերպով լուրացնելու  
համար:

## ՔԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԾՈՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Հասարակական-տեխնիկական քննություններին՝ տեխնիկական գիտելիքների ստուգումը կատարում են կվալիֆիկացիոն հանձնաժողովները, վրունք լրակազմվում են կառավարության կողմից տեխնիմումի մասին հրատարակված որենքի հիման վրա և հաստատվում են ձեռնարկությունների դիրեկտորների կողմից:

Կվալիֆիկացիոն հանձնաժողովը ստուգում և քննվողին տվյալ պրոֆեսիալի համար սահմանված տեխնիկամբի պահանջների նորմաների համաձայն:

**2.** ζωσαρωλικαιδιν-ιτεβηνθικακιαν δινηπι-  
θιοινη λιατωρψιτικ ι πομγεριτωκιανηρι,  
ιεριτωσωρηποιθιαν ηι λιατωλιψιρ ρων-  
ψιρηνηρι μασωτωκιαν μασηνακιψιθιαμρ  
ιτεβηνθικακιαν λιαρηνητερηπι, λιαρηρι αν-  
λιπηνηνηρηπι, ψηρηνηρι αι φηψηρψιθιαν μ-

գերներով, մանրամասնեկներով, պլակատներով, իսկ այնուեղ, վորտեղ արտադրության պայմանները, թուզը են տալիս, քննությունը կատարվում ե անմիջականորեն աշխատելու տեղում։

3. Քննության ժամանակ կվալիֆիկացիոն հանձնաժողովը լսում ե վարպետի կարծիքը քննվողի արտադրական-տեխնիկական պատրաստականության մասին և հետո սկսում ե ստուգի նրա գիտելիքները։ Հասարակական-տեխնիկական քննությունը տալու հաջողությունը վորոշելիս՝ տեխնիկական մինիմումի նորմաները գիտենալու հետ միասին անպայման նկատի յեն առնվում արտադրական ունակությունները և տվյալ աշխատանքի ու գործառնությունների վերաբերյալ քանակական ու վորակական ցուցանիշների կատարումը։

4. Այս բանվորները, վորոնք, որենքի համաձայն, պարտավոր են 1933—34 թ. տեխնիկամումից քննություն տալ, յեթե հասարակական-տեխնիկական քննությունը տավալ են «գովելի», «լավ» և «բավարար»,

ապա վկայականներ են ստանում կառավարության կողմից սահմանված տեխնիկմումը տալու մասին։

Բոլոր մնացած պրոֆեսիաներին պատկանող բանվորները, քննությունը տալով, վկայականներ են ստանում տեխնիկական մինիմումի նորմաները տալու մասին, մի մինիմում, վորի ծավալը սահմանում ե համապատասխան ձեռնարկությունը, տրեստը կամ տնտեսական միավորությունը։

Բացի դրանից, այն ընկերները, վորոնք քննությունը տվել են «գովելի», ստանում են կառավարության կողմից հաստատված՝ «Զ/Տ»-ի նշան։

5. Բոլոր ընկերների մասին, անկախ ստացած թվանշանից, կվալիֆիկացիոն հանձնաժողովը իր յեղրակացությունն ե տալիս, մանրամասն նշելով, թե ինչ պետք ե անեն տեխնիկամումից տվածները, վորպեսզի հետագայում ել ավելի բարձրացնեն իրենց տեխնիկական գիտելիքները, բարձրացնեն իրենց կվալիֆիկացիան։

Բացի գրանից հանձնաժողովը յեղրակա-

յություն և տալիս լավ և գովելի թվանշան-  
 ներով քննություն տված ընկերների մասին  
 և այդ յեղբակացության մեջ առաջարկում և  
 փոխադրել նրանց ավելի բարդ աշխատան-  
 քի, բարձրացնել նրանց կատեզորիան, հսկ  
 այն ընկերների մասին, վորոնք անբավա-  
 րար են տվել քննությունը, վորոնք վատ  
 արատդրական բնութագիր ունեն, հանձնաս  
 ժողովը յեղբակացություն տալով առաջար-  
 կում և փոխադրել նրանց հասարակ աշխա-  
 տանքի և նույնիսկ հեռացնել նրանց այն  
 աշխատանքից, վոր նրանք կատարում են  
 բարդ սարքավորման վրա: Այն ընկերները,  
 վորոնք հասարակական տեխնիկական քըն-  
 նությունն առաջին անգամ չեն տվել, բըն-  
 նություն են տալիս յերկրորդ անգամ՝ կվա-  
 լիքիացիոն հանձնաժողովի նշանակած  
 ժամկետին:

Բոլոր ընկերները, անկախ իրենց ստա-  
 ցած թվանշանից, հանձնաժողովի յեղբա-  
 կացությունը հրապարակելուց հետո իրենց  
 վրա կոնկրետ պարտավորություններ են  
 վերցնում և այդ պարտավորությունների  
 հիման վրա սոցիալիստական մրցում են

( 20 )

կազմակերպում իրենց մեքենայի, դադար-  
 էի տեխնիկան և տեխնոլոգիական ոպերա-  
 ցիաները յուրացնելու համար:

## ՔՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՍԸ

Զեռնարկությունների կոմիտեներն ու  
 բջիջները յուրաքանչյուր ցեխում ու խմբա-  
 կում կազմակերպում են կիրառված քննու-  
 թյան արդյունքների հատուկ քննարկում,  
 այնուհետև կուսկազմակերպությունների և  
 գործարանային վարչության հետ միասին  
 միջոցներ են ձեռք առնում հայտնարերված  
 թերություններն անմիջապես վերացնելու  
 համար (թույլ տեխնիկական դեկավարու-  
 թյուն, բանվորական ուժերի սիալ գասա-  
 վորում բընդառներում ու մեքենաների վրա  
 և այլն):

Դրա հետ միասին ձեռնարկությունների  
 կոմիտեներն ու բջիջները պարտավոր են  
 կվալիֆիկացիոն հանձնաժողովներից ստաց-  
 ված յեղբակացությունների հիման վրա ա-  
 պահովել տեխնիկական ուսուցման հատագա-  
 ծավալում այն ընկերների համար, վորոնք  
 քննությունը տվել են:

( 21 )

Կոմյերիտական կազմակերպությունները  
անտեսական կազմակերպությունների հետ  
միասին կազմակերպում են բարձր տիպի  
խմբակների ցանց՝ թե հանրակրթական և  
թե տեխնիկական բնույթի: Նույն այդ կազ-  
մակերպությունները, կազմելով առանձին  
տեխնիկական դիսցիպլիններ ուսումնական-  
ությունիջներ, միատեսակ կվալիֆիկացիա-  
ների առանձին խմբերը կցում են գիտական-  
տեխնիկական լաբորատորիաներին՝ առան-  
ձին արտադրական ցիկլեր ուսումնասիրելու  
համար, միաժամանակ գործարաններում  
ամեն կերպ զարկ են տալիս նախաձեռնա-  
կան կամացորական շարժմանը յերիտասար-  
դության մեջ՝ նոր բարձր առաջավոր տեխ-  
նիկան լուրացնելու համար:

Քննությունը տված ընկերների համար  
ամբողջ տեխնիկական ուսուցումը պետք ե-  
այնպես կազմակերպվի, վոր նա ապահովի  
յուրաքանչյուր կոմյերիտականի համար հե-  
տագալում միջնակարգ տեխնիկական կըր-  
թություն ստանալու լիակատար նուրավո-  
րություն:

## ՊԵՏԱՐԱՏԻ ՏՊԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Այս «Ստուգիչ Հարցերը» կազմված ե մեր  
տպարանի տեխնիկական տիրապետման քըն-  
նությունները կատարելու գործում թե  
քննվողներին, թե քննող հանձնաժողովին  
և թե պարապողներին զեկավարվելու նպա-  
տակով:

«Ստուգիչ Հարցեր»-ը կազմված ե ըստ  
Մոսկվայի Տպ. Բանվ. Միութ. Կուլտ. Մաս-  
սայական սեկտորի և ԶԹԸ ի հարաբարակած  
«Կոնտրոլյան Եօքուս» գրքուկի, վորից  
լրացումներով (մեր տպարանի պայմաննե-  
րին հարմարեցնելով) թարգմանված են՝ 1)  
լինութիւնի, 2) տպագրական, 3) վիմագրա-  
կան և 4) կազմարարական կարելու ու ծա-  
լելու մեքենաների հարցերը, իսկ կազմողի  
կողմից մշակված են մնացած ցեխերի ստուգ-  
ման հարցերը (գրաշարանոց, կազմատուն,  
ցինկոգրաֆիա):

Այս գրքունկում մտցված են բացառապես  
այն ցեխների տեխնիկական հարցերը, ուր  
կան տեխնիկալի տիրապետման խմբակներ։  
Մնացած ցեխներում (ռոտացիոն, ստերեո-  
տիզ և ձուլարան) այնքան քիչ են բան-  
վորների թիվը, և այնողիսի սպեցիֆիկ ըը-  
նութիւննեն, վոր առանց խմբակի հնարա-  
փոր և ցեխի վարդիտներին կցելու կարգով  
վորակավորի և կիսավորակ բանվորներին։

Այս գրքունկը տեխնուսուցման հետագա  
աշխատանքների հոմար կարող ե հանդիսա-  
նալ ոժանդակ ձեռնարկ ծրագրեր մշակելու  
վհանչ Պետհրատի, այլև մյուս տպա-  
րանների տեխնիրապետման համար։

Տպարանի կուսակցական, կոմյերիտ-  
միության, արհեստակցական կազմակեր-  
պությունների և զիրեկցիայի անմիջական  
դեկավարությամբ վերջին շրջանում հաջո-  
ղությամբ ընթանում են տեխնիկային տի-  
րապետելու պարապմունքները, ուր ընդ-  
դրկված են ՃՏՄ ի բոլոր կարող անդամ-  
ները՝ իրեն դասառաներ։

Մեր տպարանի բոլոր կազմակերպու-

թյուններն ու բանվորները խորապես հա-  
մոզված են, վոր տեխն. տիրապետման ծա-  
վալված աշխատանքները չպետք ե կրեն  
կոմպանին բնուլիք, այլ մեր աշխատանք-  
ների մեջ պետք ե դառնա սիստեմ, այս հա-  
մոզումով Յերքաղկոմի վորոշմամբ հունվա-  
րի 20—23-ը մենք կավարտենք առաջին  
ստուգումները, իսկ հիմնական քննություն-  
ները կավարտենք մարտի 1-ին։

ԳԻՐԵԿՑԻԱ

Յ հունվարի, 1934.

Լ

## ԳՐԱՇԱՐԱԿԹՅՈՒՆ

1. Վհրն ետպարանական չափի միավորը:
2. Վորոնք են չտպվող մատերիալները, ինչպես են նրանց անունները և ինչ չափեր ունեն:
3. Վորոնք են ցրվածքի կանոնները:
4. Վորոնք են տողադարձի կանոնները, կրծատ բառերը (որինակ՝ ԽՍՀՄ, ՀՍԽՀ, Ճկն, ՃՃ և այլն), թվանշանները և Փորմուլները կարելի են տողադարձ անել թե վոչ:
5. Նոր տողերի չափերը վհրքան են, ըստ տողերի լայնության:
6. Միալար շարվածքը ինչպես պետք ե շարել, վոր վորակով ստացվի:
7. Միալար շարվածքում ինչն ե կոչվում խառնուրդ:
8. Թվել մեզ մոտ լեղած հայերեն և այլ լեզուներով տառերի անուններն ու չափերը:

9. Վերնագրերը, լենթավերնագրերը և այլ ստորաբաժանումները ինչ չափերի տառով և ինչ ձևով պետք ե շարել, վոր շարվածքն ունենա վորակավոր կառուցվածք:
10. Մանոթությունների ինչ ձևեր կան և ինչպես պետք ե շարել:
11. Բնազրերի մեջ ինչպես ե նշանակվում զլիատառը, շեղագիրն ու ցրիվը:
12. Ի՞նչ բան ե շմուց-տիտուլը, տիտուլը, կալոն տիտուլը, կալոն ցիֆրը և սիգնա-տուրան:
13. Ի՞նչ ե գորն տուրան:
14. Ի՞նչպես կատարել սրբագրությունները, վոր վոչ հարեւան տառերը փչանան և վոչ ել տողերը ավել կամ պակաս ստացվեն:
15. Տպագրության միջոցին առաջացած մարաշկանները կանխելու համար ինչ պետք ե անել:
16. Վհրն ե պարզ վիվոդներ շարելու հիմնական կանոնները:
17. Առաջարանը, յերկու խոսքը, բնաքանը (ցիտատ) ինչ տառերով և ինչ ձևով

պետք ե շարել. կարմղ են տեքստից տարբերող տառերով լինել, բնարանը վհրանեղ պետք ե դնել և ինչքան պետք ե ներս քաշված լինի:

18. Նոր գլուխները նոր եջով սկսվելու դեպքում սկզբից թնչքան պետք ե գցել մարդան:

19. Վերնագրերն ու յենթավերնագրերը տեքստի նկատմամբ վմբքան լուսանցք պետք ե ունենան:

20. Եջկապի միջոցին կը շեների կողքերը (կամ մի կողքը) լուչ չափից պակաս չի կարի շարել:

21. Եջ կապի քանի՞ ձեներ կան:

22. Տեքստի մեջ իւառնուրդ տառեր շարիու դեպքում թվանշաններն թնչպիսի պետք ե շարել: Կարելի՞ լի շեղագրին տեքստի, տեքստին շեղագրի թվանշաններ գործածել և ալին:

23. Կարելի՞ լի կես տողով սկսել եջը և լեթե վոչ—լինչու:

24. Շարելու, սրբագրելու գործիքները վորմնք են:

II.

## ԼԻՆՈՏԻՊ (ՏՈՂԱՇԱՐ)

1. Ի՞նչպիսի շարող մեքենաներ կան:  
2. Շարող մեքենաներից վհրն և ամենատարածվածը:

3. ՅԵՐԵ և ովլ հնարից լինոտիպը:  
4. Վհրն և մեքենայի առջև նստելու կանոնը:

5. Ստեղնարանի (կլավիատուրա) վրա աշխատելիս ձեռքերը ձիշտ պահելու կանոնները վորմնք են:

6. Ստեղնարանը քմնի մասից ե բաղկացած:

7. Ստեղնարանի կլավիշին սղմելիս թնչնե հարկադրում վերադառնալ իր տեղը:

8. Սայրերի մագաղինից վատ ընկնելն թնչից ե պատահում:

9. Ի՞նչից ե, զոր լերբեմն մի քանի մայր միասին են ընկնում:

10. Ռետինե գլանիկների մաշվածությունն ի՞նչպես և անդրադառնում մայրերի ընկնելու վրա:

11. Ստեղնաբանի եկսցենտիկների չլուղելն ի՞նչպես և անդրադառնում ռետինե գլանիկների վրա, և այդ դեպքում ի՞նչպես են ընկնում մայրերը:

12. 46 եկսցենտիկները վ՞ր շարքում են,

13. Մայրերը մի այլ տառի հետ խառնվելու պատճառները վորոնք են:

14. Վորոնք են մայրերը ծռվելու պատճառները,

15. Մալրերի թոփչքներն ի՞նչից են առաջանում:

16. Յերբ հավաքարար (собирательный) փոկը թրւանում և՝ ի՞նչ և կատարվում:

17. Շարոցում (верстакка) առղը լցվելիս ի՞նչու ասողը (звездочка) դադարում և դառնալուց, իսկ մնացած ամբողջ մեխանիզմը դառնում է:

18. Աշխատանքի միջոցին շարոցի լեզվակի դոդողումն ի՞նչից և առաջ գալիս:

19. Շրջանակը բացելիս ի՞նչու սեպն (клин) ընկնում և շարոցի մեջ:

20. Ներքին փոխադրական սահուղիներին (салазки) ի՞նչն և աշխատեցնում:

21. Ներքին փոխադրական սահուղիները վ՞ր եկացենուրին են միացած:

22. Ներքին փոխադրական սահուղիների մեծ մտտի ջարդվին ի՞նչից և առաջ գալիս:

23. Ներքին փոխադրական սահուղիների դուրս գալու միջոցին ի՞նչն և խանգարում:

24. Մեքենայի լետիի ողամպոմպն (воздушный насос) ի՞նչի համար եւ:

25. Ի՞նչն և աշխատեցնում վերին փոխադրական սահուղիներին:

26. Վերին փոխադրական սահուղիները վ՞ր եկացենուրին են միացված:

27. Վերտեղ են վերին փոխադրական սահուղիների ավտոմատիկ անջատիչները:

28. Ի՞նչի ոգնությամբ են մայրերը (матрица) վարիս երեվատորից տարվում վերին ելեվատորը:

29. Ի՞նչ պետք է անել բացատների (шпаги) տուփն հանելու համար:

30. Ի՞նչից ե բացատի անհաջող ընկնելը  
31. Ի՞նչու մեքենան կանգ ե առնում՝  
իբր փակված ե բացատի կեռը:  
32. ՅԵՐԱ չի կարելի բացել մամլակը  
(ՏԻՏԿԻ).

33. Վարին ելեվատորը վ՞ր եկացենտրի-  
կին ե միացված:

34. Վարին ելեվատորի գլխից ինչու յեն  
մարերն ընկնում:

35. Ի՞նչպես ե կարգավորվում վարին ելե-  
վատորը միջակա (промежуточный) խողո-  
վակի նկատմամբ:

36. Ի՞նչպես և վորտեղ ե կարգավորվում  
վարին ելեվատորը վերին ելեվատորի նկատ-  
մամբ:

37. Տողերի վրա ի՞նչից են առաջ դալիս  
մազագծեր և փշիկներ (заплечек).

38. Ի՞նչու թուրլ շարված տողերը կինո-  
տիպում չեն ձուլվում:

39. Մամլակի վարին ելեվատորն ի՞նչի  
վրա լի ճենվում:

40. Ի՞նչու մեքենան կանգ ե առնում իեթե  
վարին ելեվատորը չի ասած լինում մամ-  
լակի նեցուկին (упор).

41. Առջեի շպրիցերն ի՞նչից և առաջանում:

42. Մալրերի վոտիկներն ի՞նչից են փը-  
չանում:

43. Ծուռ տողերն ի՞նչից են ստացվում:

44. Ինչու դանակները կտրում են տողե-  
րի մարմինը:

45. Ի՞նչն ե ստիպում բացատները բար-  
ձրացնող մասի լծակին (րաչաղ) բարձրանալ:

46. Բացատները բարձրացնող մասի լծակը  
վ՞ր եկստենտրիկին ե միացված:

47. Ի՞նչու բացատների բարձրացնող մա-  
սի լծակները միասին չեն աշխատում:

48. Զուլող ակին ի՞նչն ե պտտեցնում:

49. Զուլող ակը վ՞ր եկացենտրիկին ե  
միացված:

50. Զուլող ակին վ՞ր եկացենտրիկն ե  
յետ ու առաջ դարձնում:

51. Զուլող ակի արգելակն ի՞նչ գեր ե կա-  
տարում:

52. Ինչից և առաջանում ձուլող ակի  
դողդումը գլանաձև խողովակին (ծյուկ)

նստելուց առաջ, ալպինքն՝ ակի չորրորդ  
պտույտից հետո:

53. Գլանաձև խողովակն ու նրա բունն  
ինչի համար են:

54. Հրիչի (выталкиватель) լծակն ինչն և  
շարժում յետ և ինչն առաջ:

55. Հրիչի լծակն ինչպես և կարգավոր-  
վում:

56. Կաթսան վար եկացենտրիկներին և  
միացված:

57. Արձիճի նորմալ ջերմությունը կաթ-  
սայում վարքան պետք ել լինի:

58. Արձիճի ջերմությունը ինչպես պետք  
ել փորոշել:

59. Կաթսայում արձիճի մակարդակը վար-  
քան պետք ել լինի:

60. Ի՞նչի համար ե կաթսավի տակի պը-  
տուտակի զսպանակը (спиральныи пружин).

61. Ի՞նչն ե կաթսավին առաջ շարժում,  
ինչը յետ:

62. Դատարկ տողերն ինչից են ստաց-  
վում:

63. Ի՞նչից ե ստացվում չեչոտ ձուլածո  
(օչկո).

64. Կաթսան ի՞նչու արձիճը թափում ել:

65. Յետեկի շպրիցերն ինչից ե առաջ գա-  
լես:

66. Մուշտուկի վրայի կտրվածքը (խողո-  
վակի) ինչի համար ե:

67. Լինոտիպի արձիճն ինչ խառնուրդ  
ունի:

68. Ի՞նչու փականքում մայրերը դեմ են  
ընկնում:

69. Փականքի մոտի ձողի լեզվակն ինչի  
համար ե:

70. Մայրակալում (магазин) քանի խու-  
ղակ (канал) կա:

71. Վար մեքենայի խուղակում վարքան  
մայր կա:

72. Ի՞նչպես պետք ե մաքրել մայրակալը:

73. Արձիճի չափից ավելի տաքացնելն  
ինչպես ե ազդում մայրերի վրա:

74. Մայրերի վրա ինչ ազդեցություն ու-  
նի թուլ տողերի ձուլվածքը:

75. Մայրերի վրա ինչ ազդեցություն  
ունի զրաշարի կեղտոտ ձեռքերը:

76. Մայրերի վրա ինչ ազդեցություն  
ունեն կեղտոտ բացատները:

77. Վ՞ր մասնիկները մաքրվում են նույնություն, վհրը բենդինով:

78. Ունկան և շաբաթական վոր մասերը պետք են լուղվեն:

79. Մեքենայի վհր տեղերն են վտանգավոր:

80. Մեքենան կարելի՞ լե մաքրել աշխատելու միջոցին:

81. Ինչպես մեքենայի, նույնպես և առանձին մասերի քանդելու ու հավաքելու համար ի՞նչ պետք ե զիտենալ:

III.

### ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Տպագրության ի՞նչպիսի ձեեր կան,
2. Ի՞նչպիսի նախապատրաստական աշխատանքներ կան մինչև չարգածքի մեքենան ցցելը;
3. Տպագրիչն ի՞նչպիսի աշխատանքներ ե կատարում մինչև տպագրության սկսելը:

### ՏՊԱԳՐԱԿԱՆ ԶԱՓԵՐ

4. Վորհնք են ամենամանը և ամենախոշոր տպարանական չափերը:
5. Ինչի համար պետք ե ունենալ ամենալինամքու վերաբերմունքը դեպի տպարանական մատերիալը:

### ՇԱՐՎԱԾՔԻ ԴԱՍԱԼՈՐՈՒՄ (օբկածակ)

6. Տպարանական ի՞նչպիսի շարժածքներ կան:
7. Ի՞նչու շարժածքի դասավորումը մեքենայում համարվում ե վ.չ ռացիոնալ:

3. Գիրքը լուսանցքների ի՞նչպիսի անուն-  
ներ ունի:

4. Ի՞նչ բան և ուսապոռ:

10. Շըշանակի միջուկը քանի ցիցերո  
ունի:

11. Եզն ի՞նչպիս դնել՝ յերբ բոլոր կողմից  
մեկ ցիցերո ծեծ եւ:

12. Ի՞նչպիս պետք ստուգել եջերի մի  
գծի վրա ճիշտ լինելը:

ՇԱՐՎԱԾՔԻ ԱՄՐԱՅՈՒՄԸ (заключка)

13. Շարվածքի վոչ ճիշտ ամրացումը ի՞նչ  
վրա յեւ անդրադասում:

14. Շարվածքն ի՞նչ կարգով պետք եւ ամ-  
րացնել:

15. Շարվածքն ի՞նչու յեն ծեծում:

16. Ի՞նչպիս պետք եւ ծեծել շարվածքը:

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՄԵԹԵՆԱՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

17. Ի՞նչ տեսակ տպագրական մեքենա-  
ներ կան (ճնշման պրեսի տեսակետից):

18. Տպագրական հարթ մեքենաների շարժ-

ման ի՞նչ տեսակներ կան և ի՞նչպես են կոչ-  
վում (ստոպ-ցիլինդր և այլն):

19. «Պիռներ»-ը վ՞որ (շարժման) մեքե-  
նաների թվին եւ պատկանում:

20. Ի՞նչ առավելություն ունի յերկպտույտ  
(двуходоборотный) մեքենան ստոպցիլինդր  
սիստեմի մեքենաների նկատմամբ:

ՄԵԹԵՆԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

21. Ի՞նչու յեն յուղում մեքենաները:

22. Մեքենաների վ՞որ մասերը պահան-  
ջում են ավելի շատ, ավելի լավ յուղում:

23. Ի՞նչով պետք եւ լուղել ատամնավոր  
կողերը (зубчатые рейки) և ատամնանիվ-  
ները (колеса шестеренок):

24. Ի՞նչու չի թույատրվում մեքենանե-  
րը յուղել աշխատանքի միջոցին:

25. Ի՞նչ նշանակություն ունի մեքենան  
փոշուց և կեղտից մաքրելը:

26. Ի՞նչպիսի լաթով պետք եւ մաքրել մե-  
քենաները:

27. Ի՞նչու մեքենաները մաքրող լաթերը  
չի կարելի գցել հատակին:

28. Մեքենաները լուղելով և մաքրելով  
ինչ կարող ենք կանխել:

29. Տպագրիչը ինչ պետք է հիշի մեքե-  
նան աշխատանքի գցելուց առաջ:

### ՈԺԱՆԴԱԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

30. Նոր տպած գործին անլինամք վերա-  
բերվելու դեպքում ինչ դեֆեկտներ են  
առաջանում:

31. Տպագրելիս շարվածքի կեղտոտվելն  
ինչից և առաջ դուրս:

32. Շարվածքի անկանոն սրբելն ինչ հե-  
տեանքներ կարող են տալ:

33. Շարվածքն ինչպես պետք և մաքրել  
պոր լինի կանոնավոր:

34. Ինչու պետք ել լաթերը ինամքով գոր-  
ծածելու պահել շարվածքը սրբելու ժամա-  
նակ:

35. Գլանիկների (валики) նկատմամբ  
ինչպիսի նախազգուշական մոտեցում պետք  
ե ունենալ:

36. Գլանիկները վատ մաքրելուց և շար-

վածքի վատ սրբելուց ինչ կարող ե առա-  
ջնաւալ:

37. Գլանիկներն ինչու յեն հեռացնում աշ-  
խատանքն ավարտելու կամ մեքենան կանգ-  
նելու միջոցին:

38. Ինչու գլանիկների զլաներին նշաններ  
են անում:

### ԴԱՐՄԵԼԸ

39. Քո աշխատած մեքենան, ըստ նորմա-  
յի, մեկ ժամում քանի ոտտիսկ պետք ե տա:

40. Փչացման համար քանի տոկոս և  
թուղթ տրվում:

41. Աբարոտը տպելիս, իրրե կանոն, ինչ-  
պես պետք ե դարսել թուղթը:

42. Աբարոտը տպելիս, իթե ուղղված  
չլինի, ինչ կստացվի գրքում:

43. Թմբուկի մատների (կլապան) բռնման  
ինչպիսի չափը՝ ամարվում ե նորմալ:

ՇՏԿՈՒԽՄ (որովայք).

44. Շտկումն ինչ նպատակ ունի:

45. Ինչ պատճառով ե կատարվում շըտ-  
կումը:

46. Ինչու աննպատակահարմար ե համար-  
վում մեքենայում շտկում կատարիլը:

47. Շտկման ժամանակ կտրումները ի՞նչ  
նպատակով ե կատարվում:

48. Արդյոք բոլոր կլիշեները պահանջում  
են շտկման կտրումներ:

49. Կլիշեների շտկման միջոցին ի՞նչպիսի  
գգուշություն պետք ե ունենալ:

50. Շտկման ի՞նչպիսի ձևեր կան: Վերն ե  
կիրառվում մեղ մոտ:

### ՄԵՔԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

51. Տպագրական մեքենաները ի՞նչպիսի  
խմբերի են բաժանվում:

52. Վերն ե պողպատճեններ մեքենան մեր  
տպարանում ունենք այդ մեքենաներից:

53. Վերն ենք անվանում մեքենայի ֆու-  
նդամենտը:

54. Ստոպ-ցիլինդր մեքենաների թմբու-  
կին ի՞նչն ե շարժման մեջ գնում:

55. Յերգտույթ (двухоборотный) մեքենա-  
ները վորոնք են: Մեր տպարանում ունենք:

56. Յերկպտույթ մեքենաները ի՞նչ նպա-

տակով ունեն ոդային ձնշիչներ (воздуш-  
ные компрессоры).

57. Ստոպ ցիլինդրով մեքենաների հա-  
մար ի՞նչ նշանակություն ունի թափանիվը  
(маховое колесо).

58. Ներկատու ապարատ ի՞նչին ենք ասում:

59. Գլանիկները ի՞նչպես պետք ե ստու-  
գել տեղը դնելիս:

60. Կարելի՞ լե գլանիկները տեղը դնելիս  
չափու ճշտել 6 պունկտանոց պղձե գծով:

61. Շտկման միջոցին կամ այլ գեպքե-  
րում ի՞նչում մեքենան չի կարելի կանգնեցնել  
գլանիկների տակ:

62. Ի՞նչպես և վրատեղ պետք ե պահել  
գլանիկները:

63. Ի՞նչ կարող ե պատահել թմբուկի մա-  
տները, կեռիկը (крючок) և ալին անուշա-  
դիր ամրացրված, կարգավորած լինելու  
գեպքում:

64. Ի՞նչպիսի գարուիչներ (самонаклады)  
կան և սկզբունքային ի՞նչ տարրերություն-  
ներ ունեն:

65. Ի՞նչումն ե դարսիչների առավելություններն ու պակասությունները:

66. Յե՞րբ և վժրտեղ ե կառուցվել առաջին տպագրական հարթ մեքենան: Այդ Փիրմաշյի մեքենա ունենք:

67. Յե՞րբվանից և վժրտեղ սկզբեց արտադրվել առաջին անգամ խորհրդային տպագրական մեքենան և ինչպիս ե կոչվում:

68. Թմբուկի վրա պահանջված չափից ավելի թուղթ կողցնելու դեպքում ինչ առգեցություն կունենա տպագրության վրա:

69. Գծավոր շարվածքը կամ մեծ չափի գծավոր կլիշեն տպագրելու ժամանակ վարի մասում առաջացած թղթի ջարդվածքը ինչից ե առաջնում և ինչպիս վերացնել:

70. Տպագրելու միջոցին թուղթն ինչու պատճում և ինչպիս վերացնել:

71. Նոր շարվածք տպելիս յերբ վորոշ ե թղթի և շարվածքի չափը, ինչպիս պետք ե վորոշել դասավորման չափերը (լուսանցքները):

72. Շարվածքի դասավորման ժամանակ նվանակում ինչ կարգով պետք ե ամրացնել:

73. Ի՞նչն ե աջ-ձախ դարսելու նպատակը:

74. Թղթի ու մատերիալի հետ ինչպիս պետք ե վարվել:

75. Վորհնք են գլանիկների հալվելու պահաները, և ինչպիս վերացնել:

76. Գունավոր ներկերի նյութերը վորհնք են և ինչ խմբերի յեն բաժանվում: Վորհեգույն ստանալու համար բոլոր խմբերի ներկերից կարելի յե խառնուրդ ստանալ:

77. Սկ ներկերը քմնի տեսակ յեն, ինչ նյութերից յեն պատրաստված և ինչ նպատակի համար են գործածվում:

78. Ոլիֆը ինչից և ինչպիս և ստացվում. ինչ տեսակ ոլիֆներ կան և ինչ նպատակի համար են գործածվում:

## ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՏՈԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Պետք ե գիտենալ վիմագրական հարթ մեքենաների ընդհանուր կառուցվածքը և նրանց առանձին մեխանիզմների փոխազդեցությունը, այսինքն՝

- ա) Տպագրելու կառուցվածքը,
- բ) Նիրկատու ապարատը,
- գ) Թրչող ապարատը,
- դ) Թուղթ դարսելն ու դուրս բերելը;
- լե) Մեքենան շարժման մեջ դնելն ու տալերի աշխատելը;

2. Ի՞նչու պետք ե լուղել մեքենաները:

3. Մեքենաների վեր մասերը պետք ե լուղել:

4. Ցերք և լուսպես պետք ե կատարել մեքենաների լուղումը:

5. Ցերք ժամանակին չյուղել, ի՞նչ կարող ե պատահել մեքենալին:

6. Մեքենաների դարձող մասերն ի՞նչու են տաքանում:

7. Ի՞նչով պետք ե լուղել մեքենաները:

8. Ի՞նչից ե փոշին առաջ գալիս և ի՞նչ աղղեցություն ունի մեքենալի վրա:

9. Ի՞նչու համար պետք ե մաքրել մեքենան:

10. Ի՞նչ ե մեքենայի մաշվածությունը և ի՞նչից ե առաջ գալիս:

11. Ցերք և նվազ պետք ե մաքրի մեքենան:

12. Նախքան մեքենան աշխատանքի գըցելը ի՞նչ անհրաժեշտ միջոցներ պետք ե ձեռնարկել:

13. Աշխատողներին դժբախտ գեղքերից ապահովելու համար ի՞նչ միջոցառություններ պետք ե կիրառել:

14. Մեքենան գործի դնելու համար ի՞նչ կանոններ գոյություն ունի:

15. Ի՞նչ միխանիզմ է աշխատեցնում մեքենան և ի՞նչպես ե միացված նրան:

16. Ցերք թրչող ապարատի մեջ շատ կամքիչ ջուր և լինում ի՞նչ հետևանքներ ե տալիս:

17. Ներկատու ապարատը շատ կեղուս

լինելու դեպքում ի՞նչ հետևանքներ ե ունենում:

18. Թերթը դրվող կեռիկն (կրյոչօ) ի՞նչ-պես պետք ե հարմարեցնել.

19. Ավտոմատն ի՞նչպես պետք ե դնել:

20. Մեքենալի վրը ընթացքն ե կանոնավոր:

21. Տալերի (քարով) սալլակի շարժումն ի՞նչից ե առաջանում:

22. Տպագրող թմբուկի (բարան) շարժումն ի՞նչից ե առաջ գալիս:

23. Թմբուկի վրը մասն ե կանգ առնում իր տեղում:

24. Ի՞նչից ե առաջ զալիս թմբուկի ցնցումը և գույների տեղն ընկնելու վրա ինչ ազդեցություն ունի:

25. Ի՞նչպես իմանալ, վոր քարը ճիշտ չի դրված:

26. Ի՞նչպես պետք ե վորոշել աշխատանքի միջոցին տալերի իջնելը:

27. Ի՞նչ պատճառով ե քարը կոտրվում:

28. Ի՞նչպես պետք ե վորոշել ստոիսկի ճնշման չափը:

29. Կիրպանու կոլենկորը ի՞նչպես պետք է քաշել թմբուկի վրա:

30. Կիրպանու կորի թմբուկին լավ չքաշելն ի՞նչ հետևանքներ կունենա:

31. Գլանիկներն ի՞նչպես պետք ե մաքրել:

32. Գլանակներին ի՞նչպես պետք ե նոր կաշի քաշել (ֆաթաթել):

33. Մեքենաների յերկարատես կանգնելու պետքում ի՞նչպես պետք ե խնամել, պահպանել գանիկները:

34. Գլանիկները ճիշտ տեղում չդնելն ի՞նչ հետևանքներ կունենա:

35. Աշխատանքի միջոցին ի՞նչու քարի վրա քերծվածքներ են ստացվում:

36. Ի՞նչպես անել, վոր քարի վրա կեղտ և քերծվածք չլինի:

37. Փոխադրումներն (переводы) ի՞նչպես վերականգնել, վոր այլև չլուղուվեն:

38. Յերբ փոխադրումը թուլանում ե ի՞նչ պետք ե անել:

39. Կախարանից տպագրած թուղթն իջեցնելիս ի՞նչպես պետք ե դարսել:

40. Բազմագույն տպագրության դեպքում ի՞նչպես պետք ե չորացնել թուղթը:

41. Թուղթը փոթեր ունենալու գեղքում,  
ի՞նչպես պետք ե վերացնել:
42. Թրջող գլանիկն ու ըարձը ի՞նչպես  
պետք ե կարել:
43. Թրջող գլանիկն ու բարձն ի՞նչպես  
պետք ե հարմարեցնել:
44. Թրջող գլանիկը տեղը ճիշտ չդնելու  
դեպքում փոխադրության համար ի՞նչ հե-  
տեանքներ կունենա:
45. Տպագրված արտադրանքն ի՞նչպես  
պետք ե պահել:
46. Թուղթը չալլափոխելու համար ի՞նչ-  
պիսի ողի բարեխառնություն պետք ե լի-  
նի ցեխում:
47. Վեմագրական ներկերի նկատմամբ  
ի՞նչպիսի վերաբերմունք պետք ե ունենալ:
48. Ներկը չորացնելու համար ի՞նչպիսի  
նլութեր պետք ե խառնել:
49. Ի՞նչպես պետք ե ներկը (գույնը)  
հարմարեցնել բնագրին:
50. Ի՞նչու համար ե սրվում քարը, ի՞նչ  
հաստության պետք ե սրել:

51. Կալկան վիր պրոցեսումն ե գործած-  
վում:
52. Ի՞նչպես պետք ե բացել տուշը:
53. Տուշն ի՞նչպիս են պատրաստում. տու-  
շի մեջ ի՞նչպիսի խառնուրդներ կան ու նը-  
րանց դերը ի՞նչումն ե կայանում:
54. Ի՞նչու թթվուտը չի կարելի լուծել  
ջրի մեջ, ալլ պետք ե լուծել արարախեժի  
(гумми-арабикум) կամ գումոլինի մեջ:
55. Տուշով կատարված աշխատանքը կալ-  
կալի վրայից ի՞նչպես պետք ե փոխել քարի  
վրա:
56. Ի՞նչու համար տպագրելիս պետք ե  
քարը խոնավացնել (թթջել): Ի՞նչպես կամ  
ի՞նչով ե խոնավեցվում:
57. Ի՞նչպես են պատրաստում կարկան և  
ի՞նչպիսի խառնուրդներից. նրանց նշանա-  
կությունը:
58. Ի՞նչպես ե պատրաստված թթվուտը  
և քմնի ո՞նոց: Կարելի՞ չե չուրը լցնել  
թթվուտի մեջ:
59. Հերթափոխության ժամանակ մեքե-  
նան ի՞նչպես պետք ե հանձնել և ընդունել:

V.

## ԿԱԶՄԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ

1. Նախքան տպագրական դյուտը կազմարարություն գոլություն ունեցել եւ:
2. Տպած մամուլներն հարթարելիս ի՞նչ կանոն պետք եւ կիրառել, վոր գրքի լուսանցքները չվասավեն:
3. Նախքան մամուլների քաղն սկսելն ի՞նչ պետք եւ անել:
4. Ի՞նչպես անել, վոր տարբեր գրքերի մօւմուլներն իրար չխառնվեն և գրքերի մեջ բրակ տպված մամուլներ չլինեն:
5. Ծալելու ի՞նչպիսի ձևեր կան: Ի՞նչպես պետք եւ ծալել, վոր գիրքը կտրելուց հետո ունենա պահանջված լուսանցքները:
6. Գրքի կտրվածքն ի՞նչքան պետք եւ լինի, ի՞նչ հարաբերություն պետք եւ ունե-

( 52 )

նան զլիի, բերանի, պոչի և արմատի լուսանցքները:

7. Ի՞նչ նյութեր և ի՞նչ նպատակի համար են պատրաստվում:

8. Յերկաթալարն ի՞նչ համարների լենք գործածում և ի՞նչ դեպքերում:

9. Ի՞նչու համար եւ գիրքը կոշիրովկա լինում, բոլոր գրքերը պետք և անել կոշիրովկա թե վոչ:

10. Ի՞նչ եւ աստավը, ի՞նչպես եւ պատրաստվում և ի՞նչ նպատակ ունի:

11. Ի՞նչ և Փորզացը, Փորզաց կպցնելու քանի ձեւեր կան:

12. Նկարներ, քարտեզներ և այլ հավելյալ թերթիկներ ի՞նչպես պետք եւ դնել գըրքի մեջ:

13. Կազմած գրքերի զլիի մասը ի՞նչու և ներկվում և յերբ պետք եւ ներկել:

14. Ի՞նչ եւ սուպեր շապիկը, ի՞նչպես պետք եւ քաշել:

15. Կազմերի լերեսներն ու արմատները տպելու ի՞նչպիսի ձևեր կան:

16. Տպագրված մամուլները ստանալիս

( 53 )

Բնչ կարգով պետք եւ դասավորել ցեխում,  
վոր և մաքուր մնա, և մամուները հեղա  
ստացվի:

17. Թվել գործիքների անունները և նրանց  
ոգտագործման նպատակը:

### ԿԱՐ-ՄԵՔԵՆԱ

17. ա. Կարելու ի՞նչպիսի մեքենաներ կան:  
Մեր տպարանում կարող մեքենաներն ի՞նչ-  
պիսի լին:

18. Մեր կարող մեքենաներով ի՞նչպիսի  
գործեր կարող ենք կարել:

19. Ի՞նչպիսի կարելու ձեռը կան:

20. Մառլայով, լերիզով (ՏԻԸՄԱ) կարե-  
լու համար մեքենան ի՞նչպիս պետք եւ սար-  
քի զցել:

21. Ծալլած թղթերը, կարած կամ անկար,  
վատ հարթարելու դեպքում ի՞նչ հետեանք  
կունենա:

22. Արմատի կարանցքի (стружка) դասա-  
վորման ի՞նչպիսի ձեռը կան:

23. Կարելու տպարատը թղթի չափին

անհամապատասխան սարքելու դեպքում ի՞նչ  
հետեանքներ կարող եւ ունենալ:

24. Ցեղել թղթի կամ լերկաթալարի հա-  
մարն անհամապատասխան եւ թղթի հաս-  
տութեանը, ի՞նչ հետեանքներ կար ո՞ւ ե  
ունենալ:

25. Կարողն ի՞նչու համար պետք եւ ի՞մա-  
նա լերկաթալարի համարն ու վորակը:

26. Մեքենան ի՞նչպիս պետք եւ հարմարե-  
ցնել գրքի չափն ու հաստությունը վորո-  
շելուց հետո:

27. Մեքենաների վհր մասերը պետք ե  
լուղել ամեն որ, վհր մասերը հաճախակի:

28. Մեքենան պարբերաբար ու կանոնա-  
վոր չլուղելուց, փոշոտ պահելուց մեքենալի  
մեխանիզմին ի՞նչ կարող եւ պատահել:

29. Հիմնական մաքրման ժամանակ մեքե-  
նայի վհր մասերն են քանդվում:

30. Մեքենաներն ի՞նչով պետք եւ լուղել:

31. Ի՞նչով պետք եւ մաքրել մեքենաները  
և ի՞նչպիս պետք եւ պահել մաքրելու իրերը:

32. Հերթափոխի ժամանակ մեքենան

ի՞նչպես պետք ե ընդունել և ի՞նչ վիճակում  
պետք ե հանձնել մեքենան:

### ԾԱԼ-ՄԵՔԵՆԱ.

33. Ի՞նչպես և վ՞ր մասերի ոգնությամբ  
և դառնում դարսիչի (самонакладчик) հը-  
րող անիվը:

34. Ի՞նչպես և վ՞ր մասերի ոգնությամբ  
հըրող անիվը իջեցվում և թերթի վրա և ին-  
չութիւնը:

35. Վ՞ր մեխանիզմի միջոցով և յէրբ  
դարսիչի վերին սեղանից թերթերն ուղղվում  
են գարին սեղանի վրա:

36. Դարսիչի վ՞ր մասերը և ի՞նչպես են  
հարմարեցվում կենտրոնական գլանի առա-  
ջն բաժանման համար:

37. Դարսիչի վ՞ր մասերն ի՞նչպես են  
հարմարեցվում կենտրոնական գլանի յերկ-  
րորդ բաժանման համար:

38. Դարսիչի վ՞ր մասերն ի՞նչպես են հար-  
մարեցվում կենտրոնական գլանի յերրորդ  
բաժանման համար:

39. Թերթերի տալն ի՞նչպես ավելացնել

ու պակասեցնել վերին սեղանից վարի սե-  
ղանի վրա և դա ինչով և բացատրվում:

40. Ի՞նչու և դարսիչի ի՞նչ հաշվից յելնե-  
լով առաջին ծալը վերին սեղանի միջին փո-  
խաղրական ժամապենից մի փոքր յետ և  
դրվում մեջտեղից:

41. Ի՞նչպես պետք ե բարձրացնել և իջե-  
ցնել հրող անիվը:

42. Ծալը հաստ թղթից բարակ թղթի փո-  
խաղրակու ժամանակ դարսիչի մատները  
(կլաвиշ) ի՞նչ պետք ե անել:

43. Ի՞նչու չի թույլատրվում վոր հար-  
վածները (ударники) բարձրացնող պարու-  
րածե զապանակները լինեն շատ պինդ ամ-  
բացրած և ի՞նչ հետեւանք կունենա նրանց  
թույլ լինելու դեպքում:

44. Դարսիչի վերին սեղանի վրա թուղթը  
կանոնավոր դնելն ի՞նչումն ե արտահայտ-  
վում:

45. Յերկծալի դեպքում հրող անիվը վ՞ր-  
աեղ պետք ե հարմարեցնել:

46. Անհրաժեշտության դեպքում ի՞նչ մա-

սերի ոգնությամբ և ի՞նչպես կարելի լե  
հրող անիվի սեղմումն ալիւացնել:

47. Հրող անիվի ճիշտ չափով սեղմելն  
ի՞նչպես կարելի լե վորոշել:

48. Մեքենան աշխատեցնելիս յերբ կա-  
րելի լե միացնել դարսելը և սխալ միաց-  
նելու դեպքում ի՞նչ կարող ե պատահել:

49. Հրող անիվի տակ գտնված ռետինն  
ի՞նչու անհրաժեշտ ե հավասար պահել և  
ի՞նչպես պետք ե անել:

50. Դարսիչը մեքենայից բաժանված չլի-  
նելու դեպքում ի՞նչու չի կարելի մեքենայի  
թափանիվը հակառակ կողմ դարձնել և այս  
կանոնը չպահպանելու դեպքում ի՞նչ կարող  
ե պատահել:

51. Դարսիչի ամենաարագ դարձող վրը  
մասերը պահանջում են ավելի հաճախակի  
լուղում:

52. Մեքենայի ընդունող ռետինե ան-  
վակների (РОЛИКИ) ճիշտ սեղմումն ի՞նչպես  
պետք ե հարմարեցնել:

53. Ցեթե ռետինե անվակներից մեկը  
վատ լուղելու հետևանքով ծանր դառնա,

իսկ մյուսները արագ՝ ի՞նչ կարող ե պա-  
տահել:

54. Ընդունող անվակների ռետինը փափ-  
կությունը կորցնելու դեպքում՝ ի՞նչ կարող  
ե պատահել:

55. Մեծ չափի ուղիղ թուղթ ծալելիս փոթ  
ստացվելուց խուսափելու համար առաջին  
ծալի սեղանի միլի (СПРИЦ) վերաբերմամբ  
ի՞նչ պետք ե անել:

56. Դանակների կանոնավոր չափն ի՞նչ-  
պես պետք ե վորոշել և ի՞նչ պետք ե անել  
այս կամ այն ծալի դանակը բարձրացնելու  
կամ իջեցնելու համար:

57. Դանակների բերանների ասեղները  
ի՞նչ ոգուտ կարող են տալ ի՞նչպես պետք ե  
նրանց տեղը դնել և ճիշտ տեղը չդնելու  
դեպքում ի՞նչ կարող ե առաջ գալ:

58. Գլանիկների ձգումն ի՞նչի ոգնու-  
թյամբ պետք ե կատարել և գլանիկների  
յերկու գլուխն ի՞նչպես պետք ե կանգնեց-  
նել, վոր ուղիղ լինի:

59. Շատ ուժեղ ձգելու դեպքում գլանիկ-  
ներին ի՞նչ կարող ե պատահել:

60. Յերկրորդ ծալի ժամանակ ի՞նչու բա-  
ժանվում ե զլիսի վրայի, ներքին ողակն ար-  
տաքին ողակից և ի՞նչ պետք ե անհել վե-  
րացնելու համար այդ:

61. Ի՞նչ հիմնական պատճառներից գլու-  
խիներից թուղթը ծուռ ծալված ե ստաց-  
վում և ի՞նչ պետք ե անհել այն վերացնելու  
համար:

62. Գլանիկների, ընդունիչի և մեքենայի  
այլ մասերի նկատմամբ ի՞նչ պետք ե անել  
մագնիսոս թուղթ ծալելու դեպքում:

63. Վեր մեխանիզմի միջոցով և ի՞նչպես  
մեքենան անաշխատ ընթացքից փոխվում ե  
աշխատող ընթացքի և ի՞նչու յերրեմն փոկ-  
անիվը տեղաշարժող վոտին սղմելուց հե-  
տո յել չի սիացվում աշխատելու համար:

64. Պերֆորատորներն ի՞նչ ոգուտ են տա-  
լիս և ի՞նչպես են հարձարեցվում նրանք:

65. Անկյունը վեր եջի վրա պետք ե ուղ-  
ղել, 2, 3 և 4 ծալի դեպքում:

66. Մեքենան աշխատելու միջոցին լա-  
թով սրբելն ու յուղելը ի՞նչ հետևանքներ  
կարող են տալ:

67. Յուղն ի՞նչպես պետք ե պահել և ի՞նչ  
հետեանքներ կունենանք կեղտութ յուղով  
մեքենան յուղելու դեպքում:

68. Զանազան ծալիրի փոխադրող ժապա-  
վեններն ի՞նչպես պետք ե կարել և ի՞նչ կա-  
րող ե տեղի ունենալ ժապավենները քան-  
դըված կամ քրքրված վիճակում աշխատեց-  
նելու դեպքում:

69. Հերթափոխին ի՞նչպես պետք ե ըն-  
դունել և հանձնել:

1. Ի՞նչ տարբերություն կա ցինկոգրաֆիայի և լուսանկարչական ապարատների միջև:

2. Ի՞նչպես ե կոչվում ցինկոգրաֆիայի ֆոտո-ապարատը:

3. Վորժնք են ցինկոգրաֆիայի ֆոտո-ապարատի գլխավոր մասերը և ի՞նչ դեր են կատարում:

4. Գծավոր և ցանցավոր կլիշեները միատեսմակ են պատրաստվում:

5. Ի՞նչ զործիքների և նլութերի միջոցով են եղատիկից փոխադրում կատարվում ցինկի վրա:

6. Քանի՞ փորագրումից (травление) և վերջանում գծավոր և ցանցավոր կլիշեների փոխադրումը և յուրաքանչյուր փորագրումն ի՞նչպես ե կոչվում:

7. Ի՞նչից ե պատրաստված կոլոդիումը, ի՞նչ նպատակի համար ե գործածվում և ի՞նչ հատկություննենի:

8. Կլիշեները ի՞նչ տեսակ տախտակի պետք ե մեխել և ի՞նչպես պետք ե ստուգել նրանց չափերի ճշտությունը: Տախտակը չորս կողմից հավասար չլինելու և անկյունն չկազմելու դեպքում ի՞նչպես ե անդրադառնում շարքածքի և տպագրության վրա:

9. Կլիշեներ պատրաստելու քանի ձեեր կան և ի՞նչ նյութերի վրա են պատրաստվում:

10. Ցինկե կլիշեներ պատրաստելուց առաջ ի՞նչպես և ի՞նչի վրա ելին պատրաստում կլիշեները:

11. Աղեղնավոր (дугавой) լապտերն ի՞նչ մասերից ե բաղկացած և ի՞նչ նպատակի համար են:

12. Եկրանի ծուռությունն ի՞նչ հետեւանք ե ունենում նեգատիվի վրա և ի՞նչպես պետք ե ուղղել:

13. Գծավոր ու ցանցավոր նեգատիվները

կապիրովկի միջոցին ի՞նչով են միմյանցից  
տարբերվում:

14. Ենտրոփուգն ի՞նչի համար ե գործած-  
վում:

15. Ի՞նչպես պետք ե տարբերել ուժեղ և  
թուլ նեղատիվը:

16. Վոր նեղատիվը ե հակադրական (կոնտ-  
րառնայ) կոչվում:

17. Ի՞նչից ե կախված ցինկի վրա փո-  
խադրված նկարի ուժեղ և թուլ լինելը:

18. Ի՞նչպես տարբերել ուժեղ և թուլ կա-  
պիրովկան:

19. Ցինկի վրա փոխադրված նկարն ի՞ն-  
չու յե տաքացվում և ի՞նչ աստիճանի պետք  
ե տաքացնել:

20. Ցինկն ի՞նչպես պետք ե պահել, վոր  
չփչանա, և ի՞նչից կարող ե փչանալ:

21. Քանի՞ լեզանակով կարելի յե եմալ  
պատրաստել:

22. Եմալի հնանալն ի՞նչպես ե անդրա-  
գառնում կասլիրովկայի վրա:

23 Ցերեկվա լուսն ի՞նչ ազդեցություն և  
անում ցինկի շերտին լցրած եմալի վրա:

24. Եմալով պատրաստված ցինկի շերտը  
ցիրկվա լույսի ներգործումից ի՞նչպես  
խուսափել:

25. Քանի՞ տեսակ ցանց կա. Ի՞նչ նպա-  
տակի համար են գործածվում և իրարից  
ի՞նչով են տարբերվում:

26. Կլոր ցանցն ի՞նչ նպատակի համար ե  
գործածվում:

27. Նկարների վատ և լավ բնագրերն ի՞նչ-  
պես վրոշել:

28. Ի՞նչպիսի նկարներ միայն կարելի յե  
հանել ցանցավոր:

29. Լապիսն (արծաթ) ի՞նչից կարելի յե  
պատրաստել և ի՞նչ նպատակի համար ե:

30. Նախքան կլիշեն փորագրելն ի՞նչ  
անհրաժեշտ շտկումներ պետք ե կատարի  
փորագրիչը ցինկին փոխադրած նկարի վրա:

31. Ի՞նչպիսի նկարներն են կարիք ունե-  
նում ունտուշի:

32. Կլիշեների փորագրման համար ի՞նչ  
նյութեր պետք ե գործածել:

33. Կլիշեների վրա գլորելու քանի՞ տեսակ

Ներկ ենք գործածում և ի՞նչով պետք ե  
գլորել:

34. Մեքենայով և ձեռքով փարաղրված  
կլիշեները ինչո՞վ են տարբերվում:

35. Ֆրեզն ի՞նչ դեր ե կատարում փորա-  
գրության մեջ:

36. Վորմնք են ֆրեզի զլիսավոր մասերը.

37. Տախտակ սղոցող մեքենան ի՞նչ զըլ-  
խավոր մասեր ունի և ի՞նչ դեր են կատա-  
րում:

38. Վորմնք են ոանդող (строгальный)  
մեքենայի զլիսավոր մասերը:

39. Կլիշեների տախտակներն ի՞նչ բարձ-  
րություն պետք ե ունենան:

40. Տախտակ հարթող մեքենայի գլխավոր  
մասերը վորմնք են և ի՞նչ աշխատանք են  
կատարում:

41. Գունավոր կլիշեները ի՞նչպես պետք  
ե պատրաստել:

42. Ինչու անհրաժեշտ ե մաքուր պահել  
մեքենաները և ժամանակին լուղել:

43. Կլիշեները տախտակներին ի՞նչ չափի  
մեխով պետք ե ամրացնել:

ՀՀ Ազգային գրադարան



NL0927582

1934—55

1  
3277

Контрольные Вопросы  
Для тех-кружков типогр. Арменгиза  
Составил М. Эприк  
Эривань—1934